19778



# CHANSONS ARMÉNIENS

Transcrits par H. UVEZIAN

ՁԱՅՆԱԳՐԵԱԼ

# ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ

ԱԶԳԱՅԻՆ, ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՒ ԶՈՒԱՐԹ

65 ԸՆՏԻՐ ԵՐԳԵՐ



Միաձայն, Բազմաձայն եւ Դաշնակի համար

ՄԻԱՑԱԾ

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՒ ՁԱՅՆԱԳՐԱԿԱՆ ․

ԳԻՏԵԼԻՔՆԵՐՈՎ

Աշխատասիրեց՝ Յ. ԻՒՎԷԶԵԱՆ

1928

EDITION "NUVAK,,
Hagop Uvezian
B. P. No 517
Beyrouth

891.99-192
Զ-22

891.99-192
Զ-22



# Chansons Armenienne

Transcritès par **H. UVEZIAN**

## ԶԱՅՆԱԳՐԵԱԼ
# ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ

## Ա. ՄԱՍ
## ԱԶԳԱՅԻՆ ԸՆՏԻՐ ԵՐԳԵՐ

*Աշխատասիրեց Յ. ԻՒՎԷԶԵԱՆ*

**1927**

EDITION „NUVAK"
Hagop Uvezian
B. P. No. 517
Beyrouth

19728

18 .06. 2013.

F2.991

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ


| Թիւ | | էջ |
|---|---|---|
| 15. | Ազատն Աստուած | 26 |
| 4. | Գնա բլբուլ | 4 |
| 19. | Դաշնակցական խումբ | 33 |
| 10. | Ես լսեցի | 17 |
| 16. | Երբոր բացուին | 28 |
| 14. | Թէ թև ունէի | 24 |
| 5. | Իջէն հայեր | 8 |
| 7. | Իմ սիրելի զաւակունքս | 12 |
| 9. | Լուսին չիկար | 16 |
| 3. | Ծիծեռնակ | 4 |
| 18. | Կռուեցէք տղերք | 32 |
| 13. | Հայ ապրինք | 22 |
| 17. | Հերիք որդեակք | 30 |
| 21. | Հեռաւոր երկիր | 36 |
| 1. | Մեր հայրենիք | 1 |
| 12. | Մայր Արաքսի | 20 |
| 20. | Մշակ բանուոր | 34 |
| 8. | Ոհ դու բարեկամ | 14 |
| 2 | Տէր կեցո | 2 |
| 11. | Տալուորիկ | 18 |
| 6. | Քնիր իմ բալիկ | 10 |


Գրադարան

1365-2002

19 NOV 2011

## 1. ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔ




2. *p* Մեր հայրենիք շղթաներով
Այսքան տարի կապկապած,
*mf* Իւր քաջ որդւոց սուրբ արիւնով
Պիտի լինի ազատուած:

3. *f* Ահա, եղբայր, քեզ մի դրօշ.
Որ իմ ձեռքով գործեցի.
*p* Գիշերները ես քուն չեղայ,
Արտասուքով լուացի:

4. *mf* Նայիր նորան երեք գոյնով
Նուիրական մեր նշան,
*f* Թող փողփողի թշնամու դէմ,
*ff* Թող միշտ պայրի Հայաստան:

5. *p* Ամենայն տեղ մահը մի է,
*mf* Մարդ մի անգամ պիտ մեռնի,
*f* Բայց երանի որ իւր ազգին
*ff* Ազատութեան կը մեռնի:

## 2. ՏԷՐ ԿԵՑՈ ԴՈՒ ԶՀԱՅՍ

Andante religioso.



Տէ————ր, կե—ցո Դու ըզ Հայս, եւ ա-րա զնո-



սա պայ —— ծառ,ս կե——ցո դու ըզ՛Հայս, կե ——— ցո



դու ըզ Հայս. Զո — ղորմութիւն վե — րին հանեաց ծն — նել նո-ցին,





Զի նովիմք մար—թաս-ցուք ապ—րիլ յաս—տիս, յաս——տիս, յաս——տիս,



յաս —— տիս, Զի նո—վիմք մար—թաս-ցուք ապ—րիլ յաս-տիս

Տէր կեցո Դու զՀայս
Եւ արա զնոսա պայծառ,
Կեցո Դու զՀայս,
Կեցո Դու զՀայս։

Զողորմութիւն վերին
Հանեաց ծնել նոցին,
Զի նովիմք մարթասցուք
Ապրիլ յաստիս:

Ով Տէր մեր Տէր փութա,
Զազգ մերոյ համայն փրկեա
Ի թշնամեաց,
Ի թշնամեաց.

Կափո զաչքս նոցուն.
Հաս զարմատոյն ըղբուն
Եւ զազգ մեր պարտասուն
Արա նզօր։

# 3. ԾԻԾԵՌՆԱԿ

Andante






1. Ծիծեռնակ, ծիծեռնակ,
Դու գարնան սիրուն թռչնակ,
Դէպի ու՞ր, ինձ ասա՛,
Թռչում ես այդպէս արագ։

2. Ա՜խ թռիր ծիծեռնակ,
Ծընած տեղս աշտարակ.
Անդ շինիր քո բոյնը,
Հայրենի կտուրի տակ։

3. Անդ հեռու այեւոր,
Հայր մը ունիմ սրգաւոր,
Որ միակ իւր որդուն
Սպասում է օրէ օր։

4. Երբ տեսնես դու նորա,
Ինձնից շատ բարեւ արա,
Ասա թող նրա լայ,
Իւր անբաղդ որդու վրայ։

5. Դու պատմէ թէ ինչպէս
Աստ անտէր ու խեղճ եմ ես,
Միշտ լալով ողբալով
Կեանքս մաշուել եղել, է կէս

6. Ինձ համար ցերեկը
Մութ է շրջում արեգը,
Գիշերը թաց աչքիս
Քունը մօտս չի գալիս։

7. Ասի՛ր որ չր բացուած
Թառամեցայ միացած,
Ես ծաղիկ գեղեցիկ,
Հայրենի հողից զրկուած։

8. Դէ՜հ, սիրուն ծիծեռնակ,
Հեռացիր, թռիր արագ,
Դէպ' Հայոց երկիրը,
Ծընած տեղս աշտարակ։

Գ. Բ. ԳՈԴՈԽԵԱՆ

# 4. ԳՆԱ ԲԼԲՈՒԼ

( Եռաձայն խմբի համար )

Moderato. Չափաւոր.






1. Գընա բըլբուլ, մեր աշխարհից.
Էլ դու էստեղ մի երգիր.
Մեր օրը սեւ, մեր կեանքը ցաւ.
Էլ էս երկրում մի երգիր:

2. Տանջուած սիրտը, անուշ երգից
Կը քըլբւում է, խարանում,
Սրտի վիշտը, քո երգերից.
Փրփըրւում է, լեռնանում:

3. Գնա բլբուլ, մեր աշխարհից,
Գնա երգիր այլ երկրում.
Ասա էնտեղ. որ մեր վարդից
Արեան թարմ հոտ է բուրում:

4. Որ ողբաձայն մրմընջացող
Վտակների հոսանքին
Միանում են արեան շիթեր,
Առաջ շարժւում մոլեգին:

5. Որ ծաղկազարդ հովիտներից
Մահուան ցուրտ հոտ է փչում.
Որ մեր երկրում կանաչ դաշտերն
Իսկոյն կարմիր են ներկւում:

6 Գնա պատմիր, որ դու տեսար
Այրիացած մի երկիր,
Սարեր, ձորեր կարմիր հագած
Արիւնազարդ մեր երկիր:

7. Ա՜խ, ջան բլբուլ, էլ մ՛ի կանգնիր,
Գնա պատմիր աշխարհին,
Մեր ցաւն հոգին, վիշտն ու Թախիծ,
Մեր օրերը դառնագին:

ԺԻՐԱՅՐ

# 5. Ի ԶԷՆ ՀԱՅԵՐ









1. Ի զէն հայեր ի սուր եւ ի հրացան,
Մայր Հայաստանը կոչում է մի ձայն,
Լեռից լեռ թնդում է ահեղ հրաման,
Թռէք հայեր թռէք դէպի Հայաստան,
Դէպի, դէպի, դէպի հայաստան
Դէպի, դէպի, դէպի հայաստան
Թռէք հայեր դէպի Հայաստան:

2. Արեւելք արեւմուտք հարաւ և հիւսիս
Դղրդաց ու թնդաց քաղցր աւետիս.
Հայկայ քաջ զաւակաց առիւծ կրծքերից
Ազատութիւն հնչեց ամէն կողմերից:
Ամէն, ամէն, ամէն կողմերից
Ազատութիւն ամէն կողմերից։

3. Թշնամին զարհուրած փախուստ է դիմում
Անթիւ աւար ու գանձեր յետին թողնում
«Յաղթութիւն յաղթութիւն գոչենք միաձայն
Թշնամին պարտուած է, կեցցէ Հայաստան։
Կեցցէ, կեցցէ, կեցցէ Հայաստան,
Կեցցէ, կեցցէ, կեցցէ Հայաստան:

# 6 ՔՆԻՐ ԻՄ ԲԱԼԻԿ

Andante con moto. ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ՝ Ե. Լուվլզեանի









Քնիր իմ բալիկ, օրօր եւ արա,
Դու լաց մի լինիր, ես շատ եմ լացել
Կայր կռունկները սուգ ու շիւանով
Մեր սեւ երկնքից եկան անցկացան
Ախ, մեր լեռներում նրանք կուրացան.
Դու լաց մի լինիր, ես շատ եմ լացել։

Կաթիս հետ մէկտեղ սեւ վիշտը ծծիր,
Հոգուդ մէջ թող նա սեւ վրէժ դառնայ.
Ծլիր, բոյ քաշիր, բալիկ ես ղուրբան,
Դու լաց մի լինիր, ես շատ եմ լացել։

Ս. ԱՀԱՐՈՆԵԱՆ

## 7. ԻՄ ՍԻՐԵԼԻ ԶԱՒԱԿՈՒՆՔՍ

Andante






1, Իմ սիրելի զաւակունքս
Կը թափառին օտար աշխարհ,
Ես ու՞ր դիմեմ, ու՞ր փնտռեմ,
Կը ծառայեն օտար աշխարհ.
Եկա՛յք, որդեակք իմ,
Ձեր մօրն այցելութեան։

2 Դարեր անցան, լուր մը չառի,
Իմ քաջերս մեռան. կորան,
Կուլամ, արիւնս կը սառի,
Մեկը չունիմ տայ ինձ դարման.
Եկայք, եւլն.

3. Եւ դո՛ւ, հովիւ թափառական,
Կ'երգես տխուր ի մէջ հովտաց,
Ե՛կ, արտասունքն թանկ կորստեան
Տխուր մահուան մեր որդեկաց:
Եկայք, եւլն.

4. Իսկ դո՛ւ, կռունկ իմ հայրենեաց,
Գնա՛ հեռու աչքես ի բաց,
Յետին ողջոյն տո՛ւր զաւակացս,
Զի կեանքիս մէջ յոյս է մեռած:
Եկայք, եւլն.

## 8. ՊԼՊՈՒԼՆ ԱՒԱՐԱՅՐԻ (Եռաձայն խմբի համար)






Ո՛ն դու բարեկամ այրած սրտերու,
խօսնակ գիշերոյ, հոգեակ վարդերու,
Երգէ՛ պլպուլիկդ, երգէ ի սարէդ,
Զանմահ քաջքն Հայոց երգէ՛ հոգւոյս հետ;

Թաղէի վանուց ձէնիկդ ինձ դիպաւ։
Սրտիկս՝ որ ի խաչն էր կիպ՞ թունդ առաւ,
Ի խաչին թեւէն թռայ ու հասայ
Գտայ զքեզ ի դաշտ քաջին Վարդանայ

Պլպուլ, քեզ համար մեր հարքն ասացին
Թէ չէ հաւ՞ պլպուլ մեր Աւարայրին
Եղիշեայ հոգեակն է քաղցրազրուցիկ
Որ զՎարդան ի վարդն տեսնէ կարմրիկ։

Զմեռն յանապատ կու գնայ, կայ ի լաց
Գարունն յԱրտազ գայ ի բուփ վարդենեաց
Երգել ու կանչել յԵղիշէին ձայն
Թէ պատասխանիկ մ'արդեօք տա՞յ Վարդան;

9 ԼՈՒՍԻՆ ՁԻԿԱՐ



1 Լու - սին չի-կար մութ գի-շեր էր. Մի խումբ կերպար ա - րագ ա - րագ,
2 Կեանքե-րը ազ - - - գին նուի - րած, Կրծ-քին խա-չեր ա -ռաջ ըն -կած,



Տե -սանք որ քաջ խա-նի խումբն էր, Զին -ուած է - ին բո -լոր նրանք:
Գընում է -ին Տաճկաց սահման, Թըռ -չում է - ին կրա--կի նը--ման:

3\. Հրացանները ուսերնին,
Դրօշակը պարզել էին,
Գընում էին ուրախ զուարթ,
Ազատութիւն երգում էին.

4 Մութ անտառից անցնում էին
Ամէն մէկը առիւծ էին,
Նժոյգ ձիանց վրայ նստած
Մերկ սրերը քաշել էին:

5 Երբ քաջ խանը եկաւ Բասէն,
Թնդանօթներ արձակեցին,
Հայ քաջերի մօսիններից
Գնդակները զուզուռացին:

6 Երբ քաջ խանը հրամանք կուտար,
Արիք առիւծներս իմ քաջ,
Մտան թշնամու խիտ շարքեր,
Կոտորեցին ձախ ու աջ:

7\. Կեցցէ խանը իր խմբովը՝
Սարսափ թողեց Բասէնումը
Երեք օր ու գիշեր կռուեց,
Աշխարհը կըտրեց քունը:

8\. Հայաստանի հողին վրայ
Քաջը թափեց իր արիւնը.
Յիշենք հայեր, չի մոռանանք
Կտրիճ խանի քաջ անունը:



# 10, ԵՍ ԼՍԵՑԻ

*Andante con affetto.*
Հեշտական վշտայոյզ.



Ես լը - սե — ցի մի ա—նուշ ձայն.



Իմ ծե - րա - ցած մօր — — մօտ էր.



Փայլեց նը —շոյլ ——— ուրախու - թեան,



Բայց ափ—սո՜ս որ ե — րազ էր:

Կարկաչահոս աղբիւրն այնտեղ
Թափալում էր մարգարիտ.
Նա յստակ էր որպէս բիւրեղ,
Այն երազ էր ցնորամիտ:

Եւ մեղեդին տխուր, մայրենի,
Յիշեց մանկութեանս օրեր.—
Մօրըս համբոյրն ես զգացի,—
Ա՜խ, ափսո՛ս որ երազ էր:

Կրծքին սեղմեց կարօտագին,
Աչքերս սրբեց— շատ թաց էր,—
Բայց արտասուքս գնում էին,—
Ա՜խ այդ ինչո՞ւ երազ էր:

Ս. ՇԱՀԱԶԻԶ



1365-2002
Պետական Գրադարան Гос. Библиотека ՀՍՍՌ им. А. Мясникяна

# 11. ՏԱԼՒՈՐԻԿ

Խօսքեր՝ Մ. ՏԱՄԱՏԵԱՆ
Եղանակ՝ Ա. ՌՇՏՈՒՆԻ
Գրի առաւ՝ Յ. ԻՒՎԼԷՋԵԱՆ

*Tempo di marcia*




1. Տալւո — րիկ — ցի կըտրիճ եմ խորթ, Բաղըբցու պէս չեմ Թուլամորթ.
2. Երբ իմ ա — չեր բացի յաշ խարհ, Ա. ղատ տեսայ մեր սար ու քար.
3. Յո րե նի տեղ կուռեմ կո րեկ, Եր կաթ ծեծեմ գի չեր ցո րեկ.



1. Սա-րի ղա — ւակ, քա-րի որ — դի, Հին քաջ Հայոց եմ մընա—ցորդ:
2. Մինչեւփա — կեմ աչքս ի խա — ւար Պիտ չի կո—խէ հոս ոտք օ—տար:
3. Ա.-զատ ապ — րիմ, մեռնիմ ա — զատ, Սասնոյ որ—դին եմ հա-րա-զատ:




1. Տալ — ւո-րի կի ղա ւակ եմ քաջ, Ձեմ խոնարհիր վատին առաջ,
2. Իմ մամծնաւ գիս բալերու ծոց, Ինձ ընկուզկոճ մ՚եղաւ օրոց.
3. Իմ կեանքըս խիստ է եւ չարքաշ, Փա փուկ կեանքի վայլից չեմ վարժ.






1. Քա — րուտ լերանց Ես աղատ լաճ, Ձեմ տեսեր ո՚չ ա — բօր ո՚չ մաճ:
2. Տըկ — լող ծընած՝ մեծցայ ոըկլող, Կեան — քիս բաժինն է կռիւ ու բոց:
3. Բը — նա-կարանս է ապառաժ, Ըն — կերս մըրիկ ու երկրաշարժ:




Հա՛յ յաղըըր — ոիք, վա՛յ յաղըըր — ոիք, Տալւո րի - կի ղա - ւակ եմ քաջ,




Ազատու — թեան սիրուն հա — մար, Եկէ՛ք ղէպ ինձ, յա—ռա՛ջ յառա՛ջ:

# 12. ՄԱՅՐ ԱՐԱՔՍԻ






2. Բայց նոքա միշտ յեղյեղուկ
Պղտոր ջրով եղերքին
Դարի՜ւ դարի՜ւ խփելով
Փախչում էին լալագին։

3. —Արա՛քս, ինչո՞ւ ձկանց հետ
Պա՛ր չես բռնում մանկական,
Դու դեռ ծովը չի հասած
Սգաւոր ես ինձ նման։

4. Մէջքը ուսցուց Արաքսը,
Փրփուր հանեց իր տակից,
Ամպի նման գոռալով
Էսպէս խօսեց յատակից.

5. —«Խիզա՛խ, անմի՛տ պատանի,
Նիրհս ինչո՞ւ դարեւոր
Վրդովում ես, նորոգում՝
Իմ ցաւերը բիւրաւոր։

6. «Կար ժամանակ, որ ես էլ՝
Շքեղազարդ հարսի պէս
Հազար ու բիւր պճրանքով,
Փախչում էի ափերէս։

7. «Հեռո՛ւ հեռո՛ւ քչեցին
Բնիկ ազգն իմ Հայկեան,
Նորա տեղը ինձ տուին
Ազգն անկրօն, մոլեկան։

8. «Բանի որ իմ զաւակունք
Այսպէս կու մնան պանդուխտ.—
Ինձ միշտ սգւոր կը տեսնէք,
Այս է անխաբ իմ սուրբ ուխտ..»

9. Էլ չը խօսեց Արաքսը,
Ցորձանք տըւեց ահագին.
Օղակ-օղակ օձի պէս
Առաջ սողաց մոլեգին։

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ

# 13. ՀԱՅ ԱՊՐԻՆՔ

**MODERATO** (Չափաւոր)

Երաժշտութիւն՝ Յ. ԻՒՎ.ԷՋԵԱՆԻ






*Հա՛յ ապրինք.— մեր հայրն է այն դիւցազուն,*
*Որ ազատութիւն սորվեցուց մարդուն,*
*Ու մեզ վեհ անուն մը տուաւ բաժինք,*
Եղբա՛րք, Հա՛յ ապրինք եւայլն.

*Հայն ու մարդկութիւն՝ նոյն ունին օրրան,*
*Երկիր փրկութեան է մերս Հայաստան,*
*Կըրօնից նախկին սեղան է Մասիք.—*
Եղբա՛րք, Հա՛յ ապրինք եւայլն.

*Հա՛յ ապրինք, որ մեր որդիք ալ, եղբարք,*
*Կարենան պարծիլ որ զմեզ ունին հարք,*
*Զըլլա՛նք հայ անուան չըլլանք նախատինք.—*
Եղբա՛րք, Հա՛յ ապրինք եւայլն.

*Հա՛յ ապրինք.— Օր մը յաղթական մահուն*
*Պիտի բարձրանայ անմահ Հայութիւն...*
*Ո՛հ ա՛յն օր մեզի չուտ ծագէ, երկի՛նք...*
Եղբա՛րք, Հա՛յ ապրինք եւայլն.

*ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿ. ՆԱՐ-ՊԷՅ*









Թէ դեռ յիմ արեան
Չը խառնուէր թոյն,
Դեռ երակացըս մէջ
Աշխոյժ խաղային—
Ո՛հ, քանի՛ հըպարտ,
Կանչէի ազատ,
Թ'եկէք Հայե՛ր, ըլլանք
Մէկ սիրտ, մէկ մարմին,
Սիրեմք ընկեր, զընկեր՝
Սիրեմք կաթոգին:

Թէ կեանք ունէի,
Ո՛հ, կը լարէի
Թել քընարի բաղձին
Հայոց անկենդան,—
Որ նա ձեզ խօսէր
Ձեզ, պանդու՛խտ Հայեր,
Թե՛կէք Հայեր, ըլլանք
Մէկ սիրտ, մէկ մարմին,
Սիրեմք ընկեր, զընկեր՝
Սիրեմք կաթոգին:

Թէ սէր ըլլայի,
Կամ անմահ հոգի,
Կը կապէի Հայոց
Սըրտերն անմեկին,—
Յայնժամ և նոքա
Մի որդիք Հայկայ
Կ'ըլլան ի մի անճուճս
Մէկ սիրտ մէկ մարմին,
Սիրեմք ընկեր զընկեր,
Սիրեմք կաթոգին:

Ս. Հ. ՖԷԼԷԿԵԱՆ

# 15. ԱԶԱՏՆ ԱՍՏՈՒԱԾ






1. Ազատն Աստուած այն օրից՝
Երբ հաճեցաւ շունչ փչել,
Իմ հողանիւթ շինուածքին,
Կենդանութիւն պարգեւել:

2. Ես անբարբառ մի մանուկ՝
Երկու ձեռքս պարզեցի,
Եւ իմ անզօր թեւերով,
Ազատութիւն գրկեցի:



3 Մինչ գիշերը անհանգիստ՝
Օրօրոցում կապկապուած.
Լալիս էի անդադար,
Մօրս քունը խանգարած.

4 Խնդրում էի նորանից՝
Բազուկներս արձակել,—
Ես այն օրից ուխտեցի՝
Ազատութիւնը սիրել:

5 Թոթով լեզուիս մինչ կապերն՝
Արձակուեցան, բացուեցան.
Մինչ ծնողքս իմ ձայնից
Խնդացին ու բերկրեցան.

6 Նախկին խօսքն որ ասացի՝
Չէր հայր, կամ մայր, կամ այլ ինչ
«Ազատութի՛ւն», դուրս թռաւ,
Իմ մանկական բերանից:

7 «Ազատութիւն ինձ կրկնեց՝
Ճակատագիր վերեւից.
«Ազատութեան դու զինուոր,
Կամի՞ս գրուիլ այս օրից».

8 «Ո՜հ փշոտ է ճանապարհդ՝
Քեզ շատ փորձանք կ'սպասէ՝
Ազատութիւն սիրողին,
Այս աշխարհը խիստ նեղ է»:

9 Ազատութիւն, գոչեցի
Թող որոտայ իմ գլխին
Փայլակ, կայծակ, հուր, երկաթ,
Թ՛ող դաւ դնէ թշնամին.

10 Ես մինչ իմահ կախաղան՝
Մինչեւ անարգ մահու սիւն,
Պիտի գոռամ պիտ կրկնեմ,
Անդադար՝ Ազատութի՛ւն:

(1859) Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ

# 16. ԵՐԲՈՐ ԲԱՑՈՒԻՆ

*Moderato* (Չափաւոր).



Եր — բոր բացուին դռ - ներն յուսոյ Եւ մեր երկ - րէն փախ տայ ձըմեռ,



Չըք-նաղ երկիրն մեր Ար - մե-նիոյ Երբ փայ - լէ իւր քաղց - րիկ օ - րեր,



Եր - բոր ծի - ծառն իր բոյն դառնայ, Եր - բոր ծա - ռերն հագ-նին տե - րեւ՝



Ցանկամ տես — նել զիմ Կի - լիկիա, Աշ-խարհ՝ որ ինձ է — տուր ա - րեւ։ Ցան–





–կամ տես - նել զիմ Կի - լիկ-իա, Աշխարհ՝ որ ինձ է - տուր ա - րեւ։

Տեսի դաշտերն Սուրիոյ,
Լեառն Լիբանան եւ իւր մայրեր.
Տեսի զերկիրն Իտալիոյ,
Վենետիկ եւ իր կոնտոլներ.
Կղզի նման չիք մեր Կիպրեայ,
Եւ ոչ մէկ վայրն է արդարեւ.
Գեղեցիկ քան զիմ Կիլիկիա,
Աշխարհ՝ որ ինձ էտուր արեւ։

Հասակ մը կայ մեր կենաց մէջ,
Ուր ամենայն իղձ կ'աւարտի.
Հասակ մը ուր հոգին ի տենչ՝
Յիշատակաց իւր կարօտի.
Յորժամ քնարն իմ ցրտանայ,
Սիրոյն տալով վերջին բարեւ՝
Երթամ ննջել յիմ Կիլիկիա,
Աշխարհ՝ որ ինձ էտուր արեւ։

Ն. ՌՈՒՍԻՆԵԱՆ

# 17. ՀԵՐԻՔ ՈՐԴԵԱԿՔ

Երաժշտութիւն՝ Տ. ՋՈՒՀԱՃԵԱՆԻ.

ALLEGRETTO BEN MARCATO (Աշխոյժ).






2. Ինչո՞վ են նրանք մեզ տիրելու արժանի.
Նրանք մարդ չեն՝ այլ գազաններ վայրենի.
Մերն է ձիրքը, մերն է ուսումն ու հանճար,
Մերն է հողը, մենք ենք նրա տէրն արդար:
Հերի՛ք, ելլենք ցոյց տանք ևայլն:

3. Նրանց են մեր կոյս աղջկունքը, հարսունքը,
Նրանց են մեր ճակտի քրտանց արդիւնքը,
Նրանց սուրի ծայրն է կարծես մեր հոգին.
Նրանց զամբոր մեզնից շատ է թանկագին:
Հերի՛ք, ելլենք ցոյց տանք ևայլն:

4. Մենք եղբայրներ ունինք հեռու տեղերում,
Նրանք մեր վրայ լուիկ արցունք են թափում.
Չեն խնայել թև ու թիկունք, կը հասնին,
Շուտով կուգան, կը միանան սուրբ գործին:
Հերի՛ք, ելլենք ցոյց տանք ևայլն:

ՄՆԱԿԵԱՆ

# 18. ԿՌՈՒԵՑԷՔ ՏՂԵՐՔ




3. Մեռնինք յուսալով, մերն է ապագան,
Մեռնինք, բայց կեցցէ՛, կեցցէ՛ Հայաստան.
Այսպէս յորդորեց ու ընկաւ արին,
Թողլով մեզ անուն յիշատակ բարին,
Ահեղ կռուի մէջ մի փոքրիկ հերոս,
Անմոռանալի կտրին Մարտիրոս:



# 19. ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԽՈՒՄԲ




1. Դաշնակցական խումբ գնանք մենք Սասուն,
Մեր հայ եղբայրներ մեզ են սպասում.
Անդրանիկը քաջ իւր ընկերներով,
Կ'ուզէ պատերազմ, Կըսպասէ գարնան:

2. Մօտ է գարունը, շուտով կը բացուի,
Հայու խօսքը քաջ շուտով կը լսուի,
Հայերը անվախ հոգւով միացած
Հրացանն ուսերնին ոտքի են կանգնած:

3. Խմբապետները հոգւով են երդուած,
Ֆէդայի ուժով գընում են յառաջ.
Առաջն է կանգնած Անդրանիկը քաջ,
Գոռում է գոչում, կ'ուզէ պատերազմ:

4. Հերիք եղբայրներ մենք շատ քնեցինք
Բաւական չէ մեզ այսքան համբերենք.
Մայր Հայաստանը ձեռքից հանեցինք.
Հիմա ուժ ունինք դարձեալ ետ կ'առնենք:

# 20. ՄՇԱԿ ԲԱՆՈՒՈՐ

Երաժշտութիւն եւ խօսք՝
Գ. ՍԻՒՆԻ, ի









Մշակ, բանուոր, ռենչպեր աղբեր,
Արի՛ք, միանա՛նք, յառաջ գնանք.
Աշխատանքի դաշին պաշտպան
Դաշնակցութեան թեւ թիկունք տանք:

2. Ա՜խ, մենք տանջուենք, քրտինք թափենք,
Արիւն վաստակ դատենք, դիզենք,
Շահագործող ցեցեր՝ վատնեն,
Իսկ մեզ՝ չոր հաց բաժին հանեն:

3. Դե՛հ, սե՛ւ օրեր, բողոք դարձե՛ք,
Արիւն-քրտինք, երկունք մրտեք,
Տանջանք, զրկանք, լեզո՛ւ առեք,
Ազատութեան ճամբան բացեք . . . :

# 21. ՀԵՌԱՒՈՐ ԵՐԿԻՐ



1. Հե—ռաւոր երկիր նստած դու նժդեհ, Հայրենեաց բաղդին մտտուստ ես տեղեակ,



Քարոզ քա ջա րի նոր ըսկզբանց վեհ, Յեղափոխութեան ձայնատու Հըն չակ.



Քարոզ քաջարի նոր ըսկզբանց վեհ, Յե ղա փոխութեան ձայնատու Հընչակ:

2. Նոր գաղափարի քու ցանած սերման
Ազնիւ պտուղներ հասուննան արագ,
Կարին և Պոլիս որոտման նըման
Անդրանիկ շարժմունք ծընան քե, հնչա՛կ:

3. Ջար բռնակալը հայոց կեղեքիչ
Վախէն պահուեցաւ ոսկի գահին տակ.
Խուլ Եւրոպայի թընդաց մէն դահլիճ,
Հայը ցընցուեցաւ, կարմրեցաւ հնչակ:

4. Այսօր քո սերմանց նոր պտուղք ահա
Հասած կարմրին արեան նըմանակ,
Կենաց և մահու սուրբ ժամ մերձենայ,
Կարմիր հրաւէրից ակն ունինք, հընչա՛կ:

5. Կոչնակդ հնչեցո՛ւր, հնչեցո՛ւր, արագ,
Թող հայք ոտք ելլեն ծագէ մինչ ի ծագ,
Փշրի ժանտ շղթան, ծագէ նոր արեգ,
«Ազա՛տ ենք,» հընչէ ոսկեղօ՛ծ հընչակ: